ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

20 հունիսի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

88
(2754)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՓՈՐՁՈՒՄ Է ԻՆՔՆԱՄԱՔՐՎԵԼ

2020թ.-ի 44-օրյա պատերազմից 3 տարի անց՝ արդեն վաղը, Նիկոլ Փաշինյանը վերջապես կգնա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող ԱԺ քննիչ հանձնաժողով՝ պատասխանելու իր թիմակիցների նախապես պատրաստած ու սերտած հարցերին:

Ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները երեկ հայտարարել են, որ չեն մասնակցելու քննիչ հանձնաժողովի վաղվա նիստին. խորհրդարանական ընդդիմությունը հանձնաժողովի ստեղծման հենց առաջին օրվանից բոյկոտել է դրա աշխատանքները՝ պարզաբանելով, որ քննիչ հանձնաժողովը ընդդիմության գործիքն է, ուստի չպետք է իշխանությունը ղեկավարի այդ հանձնաժողովը, իսկ դրա աշխատանքներին մասնակցելով՝ ընդամենը կլեգիտիմացնեն Նիկոլ Փաշինյանին:

Ստացվում է՝ ՔՊ-ականներն իրենք իրենցով վաղը հավաքվելու են, նիստ անեն ու լուռումունջ Նիկոլ Փաշինյանին լսեն:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ-ում երկար ժամանակ է՝ պատրաստվում են այս իրադարձությանը:

ՔՊ-ականները նախապես հարցեր են մտածել, դերերի բաժանումներ են արել, որպեսզի հանկարծ ավելորդ հարցեր չտան Նիկոլ Փաշինյանին, իսկ պատգամավորներին «կուռացիա» անելու պատասխանատու գործն իր վրա վերցրել է հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, որը պատգամավորներին նախապես հանձնարարել է՝ ինչ խոսեն, ինչ հարցեր տան Փաշինյանին:

Թե որքանով է այս իշխանությունն ի վիճակի անաչառ ուսումնասիրել այն պատերազմի հանգամանքները, որի պարտության հիմնական մեղավորները հենց իրենք են, սա հարցի մի կողմն է, բայց այն, որ Փաշինյանի վաղվա մասնակցությունը ընդամենը ձեւական բնույթ է կրում եւ նպատակ ունի հերթական անգամ «թոզ փչել» հանրության աչքին, դա ակնհայտ է:

«Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ-ի պաշտոնական կայքում հրապարակված լուսանկարներում նկատեց, որ կուսակցական-քաղաքական ժողովին ներկա են եղել ոչ միայն պատգամավորները, ՔՊ-ական մարզպետները, այլ նաեւ գործադիրը՝ իր ողջ կազմով: Բացի ՔՊ անդամ նախարարներ Սուրեն Պապիկյանից, Արարատ Միրզոյանից, Վահե Հովհաննիսյանից, Գնել Սանոսյանից, Հակոբ Սիմիդյանից եւ Արմեն Փամբուխչյանից, ՔՊ քաղաքական ժողովին մասնակցում էին նաեւ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Նարեկ Մկրտչյանը, էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, ԲՏԱ նախարար Ռոբերտ Խաչատրյանը, արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, որոնք ՔՊ անդամ չեն: Ենթադրվում է, որ կուսակցական հարցերը պետք է որ նրանց չառնչվեին, բայց, արի ու տես, ոչ կուսակցական նախարարները եւս ակտիվորեն նեգրավված են ներկուսակցական աշխատանքներում: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ քաղաքական ժողովի օրակարգում հիմնականում ներկուսակցական հարցեր են եղել եւ ավագանու առաջիկա ընտրություններին մասնակցության հարցեր: Հավանաբար, ՔՊ-ում այնքան մարտական են տրամադրված, որ որոշել են ռեսուրս չխնայել ու իրենց թեկնածուի քարոզարշավի աշխատանքներում ներգրավել, օրինակ, ոչ ՔՊ անդամ Անահիտ Ավանեսյանին կամ Վահան Քերոբյանին: «Ժողովուրդ» օրաթերթի աչքից չվրիպեց նաեւ, որ ՔՊ քաղաքական ժողովին մասնակցում են նաեւ փոխվարչապետներ Տիգրան Խաչատրյանը եւ Մհեր Գրիգորյանը: «Ժողովուրդ» օրաթերթը ՔՊ վարչության փոխնախագահ Գեւորգ Պապոյանից հետաքրքրվեց՝ ինչու են անկուսակցական փոխվարչապետները մասնակցել կուսակցության քաղաքական ժողովին, ինչ առնչություն ունեն նրանք ներկուսակցական հարցերի հետ: «Մեր կանոնադրության համաձայն՝ քաղաքական ժողովին մասնակցում են կոնկրետ մարդիկ. կան պաշտոններ, որոնց համապատասխանող անձինք մասնակցում են ժողովին, եւ կան հրավիրյալներ, որոնց որոշում է կուսակցության վարչությունը: Այս պարագայում պարոն Գրիգորյանը եւ պարոն Խաչատրյանը քաղաքական ժողովին մասնակցել են որպես հրավիրյալներ: Կարծում եմ՝ հարց չպետք է առաջանա, քանի որ նրանք երկուսն էլ քաղաքական պաշտոններ են զբաղեցնում ու կարող էին հրավիրվել: Քաղաքական ժողովին բոլոր հրավիրվածները քաղաքական պաշտոն են զբաղեցնում»,-ասաց Պապոյանը:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Հովիկ Աղազարյանի եւ Տիգրանյան փողոցում կարտոֆիլ վաճառող Արթուր Հակոբյանի միջեւ տեղի ունեցած միջադեպի գործը կարճվեց: Այսինքն՝ իշխանական պատգամավորի մասնակցությամբ տեղի ունեցած խուլիգանական արարքը չքննվեց, եւ պատգամավոր Աղազարյանը չպատժվեց իր խուլիգանական վարքի համար: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ՀՀ քննչական կոմիտեի խոսնակ Գոռ Աբրահամյանը հաստատեց տեղեկությունը՝ նշելով. «Վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ քրեական վարույթը կարճվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով: Որոշման օրինականությունը ստուգվել է դատախազության կողմից»: «Ժողովուրդ» օրաթերթը դեռեւս ամիսներ առաջ գրել էր, որ այս գործը կկարճվի, քանի որ այդպես է ցույց տալիս ընթացքը ու նաեւ քաղաքական հրահանգը: Բանն այն է, որ կարտոֆիլ վաճառող Արթուր Հակոբյանը միջադեպից հետո որպես կասկածյալ ձերբակալվել էր ու կարճ ժամանակ անց ազատ արձակվել: Իրավապահները լսել էին նաեւ պատգամավոր Աղազարյանին, ու մինչ օրս գործով այլ քննչական գործողություններ չեն կատարվել, քրեական գործով չկա մեղադրյալ, Արթուր Հակոբյանի նկատմամբ էլ քրեական հետապնդում չի իրականացվել: Դատելով իրավիճակից՝ իրավապահները հասարակական բուռն արձագանքից հասկացան, որ ՔՊ-ական պատգամավոր Աղազարյանը, մեղմ ասած, սարքել էր վաճառական քաղաքացու գլխին, եւ այլընտրանք չունեն, քան քրեական գործը կարճելը: Վերջնարդյունքում քաղաքացու գլխին սարքած, խուլիգանական վարք դրսեւորած պատգամավորը մնաց անպատիժ. ընտրողի արդարադատության հերթական դրսեւորումը: Հիշեցնենք, որ պատգամավորը մարտի 3-ին աշխատանքի գնալու ճանապարհին՝ Տիգրանյան հասցեում, կարտոֆիլի վաճառքով զբաղվող Հակոբյանի հետ վեճ էր ունեցել, ոտքով հարվածել առեւտրականի կարտոֆիլի պարկերին ու երկու պարկ թափել փողոցում: Միջադեպի պատճառը «կարտոֆիլների փողոց» անունով հայտնի փողոցում կարտոֆիլ վաճառելն է եղել, որը դուր չէր եկել Աղազարյանին:



2022 թվականի մարտի 13-ին երդում տված եւ Հայաստանի Հանրապետության նախագահ դարձած Վահագն Խաչատուրյանն իրեն պատկանող անշարժ գույքերը կամ նվիրատվություն է ստացել, կամ ժառանգել: Օրինակ՝ 2002 թվականին նա նվիրատվություն է ստացել Երեւանի Կենտրոնում գտնվող բնակարան եւ ավտոտնակ, իսկ 2017 թվականին էլ երկու հողամաս է ժառանգություն ստացել, որոնցից մեկը՝ Արաբկիրում, մեկը՝ Զորաղբյուրում: Նվիրատուների ցանկը, կամ թե ումից է ժառանգություն ստացել հողամասերը, նշված չեն: Հաշվետու տարում բանկային հաշվին, առանց ավանդների, նախագահն ունեցել է 5 մլն 540 հազար դրամ, 23 մլն դրամ, 1 մլն դրամ, 267 եվրո եւ 163 դոլար: Որպես կանխիկ դրամ նա տարվա վերջին հայտարարագրել է 15 հազար դոլար եւ 800 հազար դրամ գումար: Մեկ տարում Խաչատուրյանը վաստակել է 15 մլն դրամ, որից 170 հազար դրամը եղել ԵՊՀ-ից՝ աշխատանքի վարձատրություն, 9 մլն 926 հազար դրամը՝ աշխատանքի վարձատրություն որպես ՀՀ նախագահ, 4 մլն 630 հազար դրամը եղել է նրա՝ ԲՏԱ նախարար ժամանակ եղած եկամուտը, 400 հազար դրամ կրկին աշխատավարձ «Անտարես»-ից, եւ 101 հազար դրամ էլ՝ Շուշիի տեխնոլոգիական համալսարանից: Ծախսերի մասին որեւէ տվյալ Վահագն Խաչատուրյանի հայտարարագրում ներկայացված չէ: Այսինքն՝ ստացվում է՝ նա ստացել է եկամուտ, բայց կարիք չի ունեցել ծախսելու դրանք:

ԶՐՈՒՅՑ

ԵԿԵՂԵՑԻՆ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանն է: Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանի հետ զրուցել ենք խաղաղության օրակարգի հավանականության, պետություն-եկեղեցի լարված հարաբերությունների մասին:



-Սրբազան, զրույցը սկսենք երկրում տիրող անվտանգային իրավիճակից: Տեսնում ենք, որ սահմաններին իրավիճակը գրեթե ամեն օր լարված է, հակառակորդը կրակում է. չնայած այս ամենին՝ Հայաստանի իշխանությունները խոսում են խաղաղության նոր պայմանագիր կնքելու մասին: Ո՞րն է այդ խաղաղության գինը:

-Հայաստան անվանումը վերագրել այսօրվա իշխանություններին, կարծում եմ, այդքան էլ ճիշտ չէ: Այսօրվա իշխանությունները ինչ են հասկանում խաղաղություն բառի տակ՝ անհասկանալի է, բայց դա բնավ Հայաստանի ուզած խաղաղությունը չէ: Սա խաղաղություն է նվաստացման գնով, քանի որ մենք արդեն հաշտվել ենք այն մտքին, որ նվաստացման մեջ կարող ենք հպարտանալ, պարտությունով հպարտանալ: Հետեւաբար այդ պատճառով էլ մենք պատրաստ ենք խաղաղության ցանկացած գնով՝ մտածելով, որ միջազգային հանրություն անունով կոչված ինչ-որ զանգվածը թույլ չի տա, որ 29800 քառ. կմ-ն չկորցնենք, բայց դա էլ ենք կորցնելու, եթե այս զիջողական քաղաքականությամբ գնանք:

Գիտե՞ք, հարցը այն չէ, որ պետք է փոխզիջում: Այո, մենք պարտվել ենք պատերազմում, չպետք է պարտվեինք բնականաբար եւ բոլոր շանսերն ունեինք դրա համար, բայց թափթփված եւ ապիկար ղեկավարման պատճառով պարտվեցինք: Դրա համար հատուցեցինք ավելի մեծ, քան պետք էր՝ հանձնելով նաեւ այն տարածքները, որոնք գրավված չէին թշնամու կողմից: Այս վիճակում պատրաստ ենք ամեն-ամեն ինչ զիջելու՝ մտածելով, որ այդ միջազգային հանրությունը պետք է ապահովի Հայաստանի անվտանգությունը: Այդպես չի լինելու, որովհետեւ, ինչպես ասացի, փոխզիջում չկա: Ինչու՞ որեւէ զիջում Ադրբեջանի ու Թուրքիայի կողմից չկա, իսկ մենք ամեն պահի պատրաստ ենք զիջելու ամեն ինչ: Հասել ենք արդեն զինանշանին, Արարատ լեռանը, ցեղասպանությանը: Այնպես որ, սա ոչ թե Հայաստանի, այլ այս իշխանությունների երազած խաղաղությունն է:

-Տպավորություն կա, որ հանրությունն էլ արդեն համակերպվել է այս իրավիճակին: Գրեթե ամեն օր նոր շարժումներ են ձեւավորվում, որոնք հայտարարում են, թե իրենց նպատակն է ժողովրդին ոտքի հանել, սակայն, ինչպես տեսնում ենք, այդպես էլ ժողովուրդը ոտքի չի ելնում: Ի՞նչը պետք է արթնացնի ժողովրդին, եւ հնարավո՞ր է, որ եկեղեցին իր ձեռքը վերցնի ժողովրդին համախմբելու գործը:

-Եկեղեցին իր խոսքն ասել է, եւ բոլորին հասանելի է այդ խոսքը, եւ ժողովուրդը, հասարակությունը ի վիճակի են համախմբվելու այդ գաղափարի շուրջ. եթե չեն համախմբվում, ուրեմն իրենց մեջ ինչ-որ բան փչացած է: Այսինքն՝ իրենք սահուն կերպով ազգից վերածվել են ժողովրդի եւ քաղաքացուց վերածվել են բնակչի: Եկեղեցին չի կարող հեղափոխություն անել, թեեւ տեսականորեն կարող ենք պատկերացնել նման իրավիճակ. երբ որ չմնա ուրիշ ելք ու ճար, եկեղեցին կկանգնի այդ շարժման գլուխ եւ հեղափոխության կոչի, բայց դեռ բոլոր հնարավորությունները սպառված չեն:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԱԺ-ՈՒՄ

Ամ մարդու իրավունքների դաշտանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հարգելի՛ հայրենակիցներ, բազմաթիվ քաղաքացիներ են մշտապես դիմում ինձ Երեւանի քաղաքապետարանի հետ կապված իրենց անհանգստություններով, խախտված իրավունքների մասին պատմություններով:

Հունիսի 23-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի գործատուների հանրապետական միության հետ համատեղ (Ազգային ժողով-քաղաքացիական հասարակություն համագործակցության շրջանակներում) կազմակերպում ենք աշխատանքային քննարկում՝ «Մարդու իրավունքների պաշտպանությունը Երեւանի քաղաքապետարանի գործունեության համատեքստում» խորագրով:

Եթե ոտնահարվել են ձեր իրավունքները Երեւանի քաղաքապետարանի կողմից, եւ ցանկանում եք բարձրաձայնել ձեր խնդիրների մասին, թեմայի շրջանակներում ունեք առարկություն, անհամաձայնություն կամ առաջարկ, խնդրում եմ նախապես գրանցվել հանդիպմանը մասնակցելու համար: Գրանցվելու համար կարող եք զանգահարել հետեւյալ հեռախոսահամարով՝ 011 513 230, աշխատանքային ժամերին՝ 09:00-18:00-ն»:

ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՎԵՐՑՆՈՒՄ ԵՆ» ՆԱԵՎ ԳՅՈՒՄՐԻՆ

Մեր աղբյուները հայտնում են, որ Նիկոլ Փաշինյանը որոշել է զբաղվել Գյումրիով եւ ամբողջական իշխանություն վերցնել այնտեղ: Հիշեցնենք, որ այս պահին գործում է կոալիցիա ՔՊ-ի եւ «Բալասանյան» դաշինքի միջեւ, ու իշխանությունը փաստացի «Քաղաքացիական պայմանագրի» ձեռքում չէ: Մեզ փոխանցեցին, որ Գյումրիում ՔՊ-ի մարդը լինելու է Աննա Հակոբյանի ազգական, փոխքաղաքապետ Վահագն Մկրտչյանը, եւ կամաց-կամաց ամբողջ քաղաքային իշխանությունը փոխանցվելու է նրան. արտահերթ կամ հերթական ընտրություններով նա է դառնալու քաղաքապետ: Մկրտչյանի հանդեպ տածած հատուկ վերաբերմունքի դրսեւորումներից մեկն այն է, որ Նիկոլ Փաշինյանը երկրորդ անգամ է մասնակցում այս երիտասարդի ընտանեկան միջոցառմանը, եւ այն լուսաբանվում է սոցցանցերում: Ավելին՝ 28-ամյա երիտասարդի՝ քաղաքապետ դառնալու հարցը հեշտացնելու նպատակով կառավարությունը խոշոր ներդրումային ծրագիր է իրականացնելու, այդ նպատակով 12.06.2023թ.-ին վարչապետի N 635 Ա որոշմամբ ստեղծվել է Գյումրի համայնքի զարգացման ռազմավարության մշակման խումբ, որի անդամների թվում ընդգրկված է նաեւ Վահագն Մկրտչյանը: Փաշինյանի շրջապատից շատերը վստահ են, որ 2018թ.-ի հեղափոխությունից հետո Նիկոլի համար Գյումրին միստիկ ընկալումներ եւս ունի, իսկ հանրապետության երկրորդ քաղաքում բացարձակ իշխանություն հաստատելը նաեւ ներքաղաքական կարեւորագույն հարց է: Մեզ փոխանցեցին, որ ստեղծված իրավիճակը խիստ անհանգստացնում ու դուր չի գալիս գործող դերակատարներին, որոնք դեռեւս չեն համարձակվում բացահայտ դժգոհություն արտահայտել, միաժամանակ երեւի հույս ունեն, որ գոնե մի բան էլ իրենք կստանան իշխանություններից:

ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ Է ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ գլխավոր դատախազությունը բողոքարկելու է ՀՀ վերաքննիչ քրեական դատարան ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ, ՀԱՊԿ նախկին գլխավոր քարտուղար Յուրի Խաչատուրովի որդու՝ Իգոր Խաչատուրովի արդարացման որոշումը: Այս մասին «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեցին դատախազությունից: Ինչպես հայտնի է, նրա նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցված էր, քանի որ մայիսի 10-ին Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Տաթեւիկ Գրիգորյանը հրապարակել էր որոշում, որով նա արդարացվել էր: Հավելենք, որ 2022թ.-ի մայիսի 17-ին՝ Երեւանի Կիեւյան փողոցում ընդդիմության նախաձեռնած անհնազանդության ակցիայի ժամանակ, Իգոր Խաչատուրովը ձերբակալվել, ապա կալանավորվել էր:

Խաչատուրովին մեղադրանք էր առաջադրվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 316-րդ հոդվածի 1-ին մասով (իշխանության ներկայացուցչի նկատմամբ բռնություն գործադրելը): Ըստ ՀՀ քննչական կոմիտեի՝Խաչատուրովը ակցիայի մեկ այլ մասնակցի հետ խոչընդոտել է փողոցն ազատելու եւ անձանց բերման ենթարկելու՝ ոստիկանության տեսուչի գործողությունները, նրա նկատմամբ առողջության համար ոչ վտանգավոր բռնություն գործադրել՝բռունցքով մի քանի անգամ հարվածելով նշված աշխատակցի կրծքավանդակի եւ որովայնի հատվածներին: Հուլիսի 11-ին Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը որոշել էր փոխել Խաչատուրովի խափանման միջոց կալանավորումը, եւ նա ազատ էր արձակվել՝1 մլն դրամ գրավի դիմաց:

ԸՆԴԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ՄԱՍՆԱԿՑԻ

Ազգային ժողովի ընդդիմադիր «Հայաստան» եւ «Պատիվ ունեմ» խմբակցությունները հայտարարել են, որ չեն մասնակցելու 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի նիստին, որին մասնակցելու է Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը:

Ընդդիմադիր խմբակցություններն այդ մասին համատեղ հայտարարություն են տարածել:

Ընդդիմադիրները հանձնաժողովի նիստին իրենց չմասնակցելը հիմնավորում են նրանով, որ քննիչ հանձնաժողովի ձեւավորումն ինքնին իշխանական մեծամասնության կողմից չի կարող ապահովել անաչառություն, համապարփակություն, քանի որ, ըստ նրանց, իշխող ուժի՝ ճնշող մեծամասնություն ունեցող հանձնաժողովն ի զորու չէ առարկայական քննել սեփական իշխանության, կառավարության գործունեությունը:

Քննիչ հանձնաժողովները ձեւավորվում եւ ձեւավորվել են կա՛մ ընդդիմության, կա՛մ խնդրո առարկա հարցի շուրջ շահերի բախում չունեցող ուժի կողմից, ինչպես եղավ Ապրիլյան քառօրյայի հանգամանքներն ուսումնասիրելու պարագայում: Իշխանությունը քննություն անցկացնելու համար ունի վարչական, իրավական, դատական բոլոր գործիքներն ու հնարավորությունները»,- ասված է հայտարարության մեջ:

Նշվում է, որ համապարփակ, ամբողջական եւ հանրային վստահություն ունեցող, Ազգային ժողովից դուրս, համախոհությամբ եւ համաչափությամբ հանձնաժողով ձեւավորելու համար ընդդիմությունը հադես էր եկել նոր որակի եւ կառուցվածքի քննիչ հանձնաժողով ձեւավորելու նպատակով օրենսդրական նախաձեռնությամբ, որն էլ մերժվեց իշխանությունների կողմից:

Ընդդիմադիր խմբակցությունները պնդում են, որ նախապես հայտարարված Փաշինյանի հրապարակային, ուղիղ եթերում ցուցմունք տալու նախաձեռնությունը որեւէ կերպ չի նպաստելու 44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրելուն, քանի որ հրապարակային վկայությունների պարագայում անհնար է լինելու պետական, ռազմական, դիվանագիտական գաղտնի տեղեկությունների հրապարակումը կամ դրանց շուրջ հարցադրումների ներկայացումը:

Միեւնույն ժամանակ, հայտարարության մեջ նշվում է, որ մեկ հարցաքննվողի համար բացառություն անելու դեպքում քննիչ հանձնաժողովը հավասարության համար պարտավոր է հրապարակել բոլոր հարցաքննության ենթարկվածների ցուցմունքներն ու պատասխանները, հակառակ պարագայում ստեղծվում են անհավասար պայմաններ, եւ քննիչ հանձնաժողովը լինելու է Փաշինյանի քաղաքական թիրախավորումների, «մեղավորներ» նշանակելու հարթակ»:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

ՄՈՒՏՔԸ ՎՐԱՍՏԱՆ՝ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՐՏՈՎ

Առաջիկայում Հայաստանի քաղաքացիները՝ Վրաստան, իսկ Վրաստանի քաղաքացիները Հայաստան կկարողանան ճամփորդել նաեւ նույնականացման քարտերով:

Հայաստանի ԱԺ արտաքին հարաբերությունների հանձնաժողովը հավանություն է տվել «Հայաստանի Հանրապետության եւ Վրաստանի միջեւ երկու պետությունների քաղաքացիների համար փոխադարձ առանց մուտքի արտոնագրի ճամփորդելու մասին» համաձայնագիրը վավերացնելուն:

Հայաստանի եւ Վրաստանի միջեւ գործում է քաղաքացիների համար առանց մուտքի վիզաների այցելության ռեժիմ, որը սահմանվում է 1993թ. մայիսի 19-ին ստորագրված ՀՀ-ի եւ Վրաստանի քաղաքացիների՝ իրենց տարածքներով առանց վիզաների տեղաշարժման մասին համաձայնագրով: Ներկայումս ՀՀ քաղաքացիներն անձը հաստատող փաստաթղթով Վրաստանի տարածքում կարող են գտնվել մինչեւ 1 տարի ժամկետով, Վրաստանի քաղաքացիները՝ՀՀ տարածքում առավելագույն 180 օր մեկ տարվա ընթացքում: Նոր համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո 1993-ի համապատասխան համաձայնագիրն ուժը կորցրած կճանաչվի:

«2020թ. մարտի 3-ին ՀՀ եւ Վրաստանի վարչապետների կողմից ստորագրվել է ՀՀ կառավարության եւ Վրաստանի կառավարության միջեւ քաղաքացիների տեղաշարժի դյուրացման մասին մտադրությունների հուշագիրը: Կողմերը հայտնել են իրենց մտադրությունը համաձայնագիր կնքելու վերաբերյալ, որն էլ կնքվել է 2023թ. հունվարի 12-ին: Վրացական կողմը փետրվարի 2-ին արդեն ավարտել է ներպետական ընթացակարգերը: ՀՀ-ում նախագիծն անցել է սահմանադրական վերահսկողություն եւ ներկայացվել ԱԺ»,- ասաց ԱԳ փոխնախարար Վահան Կոստանյանը:

Ըստ համաձայնագրի՝ երկու երկրների քաղաքացիները ձեռք կբերեն միմյանց պետությունների տարածքներ նույնականացման քարտերով այցելելու իրավունք:

Հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը նշեց, որ համաձայնագրի վավերացումը բխում է ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագրից, շատ կարեւոր է Վրաստանի հետ երկկողմ հարաբերությունների տեսանկյունից: «Սա մեր հարյուրավոր քաղաքացիների կյանքը հեշտացնող նախագիծ է, հատկապես՝ այն մարդկանց, որոնք հաճախ են ճամփորդում հարեւան երկիր»,-ասաց Խանդանյանը:

ՔՊ խմբակցության պատգամավոր Գուրգեն Արսենյանը շեշտեց՝հարեւանների հետ փոխհարաբերությունները կառուցելիս պետք է առաջնորդվել բացառիկ բարեկամական մթնոլորտ ստեղծելով պաշտոնական եւ ոչ պաշտոնական հարթություններում: «Մեր կարեւորագույն նվաճումը պետք է լինի մեր հարեւան ժողովուրդների հետ մեր հարաբերությունների ճշգրտումն ու դրանք հարեւանային ռեժիմ տեղափոխելը: Դա մեր առաքելությունն է, մեր պետության անվտանգությունն է...: Մենք այս պահին կանգնած ենք խրթին խնդիրների առջեւ, որը պարունակում է երկու թնջուկ՝հայ-ադրբեջանական եւ հայ-թուրքական հարաբերությունները: Երկու պարագայում էլ թնջուկը գեներացրել է վտանգ Հայաստանի եւ ժողովրդի անվտանգության համար: Վրաստանի օրինակով մենք պետք է կարողանանք ձգտել, որ մեզ շրջապատող բոլոր ժողովուրդների հետ գտնենք գոյակցության բանալին, այն ֆորմուլան, որը հնարավորություն է տալու մեզ խաղաղ ապրել՝ չունենալով իրար ոչնչացնելու ծրագրեր»,- ասաց Արսենյանը:

Վահան Կոստանյանն արձագանքեց՝ ՀՀ-ն իր երկու հարեւան երկրների՝ Վրաստանի եւ Իրանի հետ հարաբերությունները փորձում է կառուցել՝ անկախ աշխարհաքաղաքական զարգացումներից, հաշվի առնելով այն կարեւորությունը, որ Հայաստանը տալիս է այդ հարաբերություններին: Իսկ ինչ վերաբերում է Վրաստանի հետ հարաբերություններին՝ փոխնախարարն արձանագրեց, որ հատկապես վերջին տարիներին դրանք բավականին խորացել են, հարաբերությունները բավականին ինտենսիվացել են, քաղաքական մակարդակում հարաբերությունները շատ ակտիվ են: «Իհարկե, մենք հանրային, հասարակական մակարդակում ունենք որոշակի խնդիրներ, որոնք հասցեագրելը շատ կարեւոր է, անգամ անվտանգային նշանակություն ունի: Ցավոք, վրացական մեդիայում երբեմն նաեւ հայտնվում են որոշակի ելույթներ, որոնք ատելության խոսք են պարունակում Հայաստանի եւ հայերի նկատմամբ: Մենք այս թեմայով սերտորեն աշխատում ենք մեր վրացի գործընկերների հետ: Եվ վստահ եմ, որ կկարողանանք հաղթահարել այս խնդիրները»,-նշեց Կոստանյանը:

Իսկ, ընդհանրապես, փոխնախարարի խոսքով՝ Հայաստանը եւ Վրաստանն իրենց հարաբերությունները վերջին մի քանի տարիների ընթացքում կառուցում իրենց հարաբերությունները վերջին մի քանի տարիների ընթացքում կառուցում են միմյանց չվնասելու եւ միմյանց զգայունություններն ամբողջությամբ հաշվի առնելու վրա:

Համաձայնագիրը կքննարկվի ԱԺ լիագումար նիստում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԵՏՐՈՅԻ ՆՈՐ ԿԱՅԱՐԱՆ

Երեւանի քաղաքապետի տեղակալ Տիգրան Ավինյանը հայտնեց «Սուրմալու» առեւտրի կենտրոնի մերձակայքում մետրոյի նոր կայարանի կառուցման նախագծի մասին:

«Մենք շուտով պետք է հայտարարենք «Սուրմալու»-ի մերձակայքում մետրոյի նոր կայարանի կառուցման նախագծի մասին: Դրա տեխնիկական առաջադրանքը, ենթադրում եմ, պատրաստ է», - գործակարգավարական նիստի ժամանակ ասաց Ավինյանը:

Ավինյանն անդրադարձել է նաեւ Աջափնյակի մետրոյի նոր կայարանի նախագծման աշխատանքներին՝ ընդգծելով, որ միաժամանակ նախագծման երկրորդ եւ երրորդ փուլերում են:

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ՝ ԿԱՊԱՆՈՒՄ

Քննարկվում է հենց Կապանում Ռուսաստանի Դաշնության գլխավոր հյուպատոսություն բացելու հարցը:

Այս մասին ասաց Հայաստանի արտաքին գործերի փոխնախարար Վահան Կոստանյանը ԱԺ-ում լրագրողների հետ ճեպազրույցում:

«Քննարկվում է հենց Կապանում գլխավոր հյուպատոսություն բացելու հարցը»,- ասաց Կոստանյանը:

Թե ինչ նպատակներով է ՌԴ-ն հենց Կապանն ընտրել, փոխնախարարը հորդորեց հարցնել Հայաստանում ՌԴ-ի դեսպանությանը:

«Ընթացակարգերն ամբողջությամբ պահպանվելու են: Մենք ողջունում ենք մեր միջազգային գործընկերների հետաքրքրությունն ու ցանկությունը Սյունիքում ունենալ դիվանագիտական ներկայացուցչություն՝ տեղում իրավիճակին ավելի լավ ծանոթանալու համար»,-ասաց Կոստանյանը:

Ավելի վաղ Կապանում գլխավոր հյուպատոսություն էր բացել Իրանի Իսլամական Հանրապետությունը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՌՈՒՄԲԻ ՏԵՂԱԴՐՄԱՆ ԱՀԱՋԱՆԳԵՐ՝ ԿԱԼԱՆԱՎՈՐԻՑ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Գառնիկ Բաղդասարյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, լինելով ՀՀ ԱՆ «Վանաձոր» ՔԿՀ-ի կալանավոր, 2022 թվականի հոկտեմբերի 07-ին՝ ժամը 11:15-ի սահմաններում, քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզային վարչության հերթապահ մաս եւ հայտնել, որ ռումբ է տեղադրվել Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի, ինչպես նաեւ Լոռու մարզի դատախազության շենքի նկուղներում:

Սա վերջը չէ. Գառնիկ Բաղդասարյանը 2022 թվականի հոկտեմբերի 07-ին՝ ժամը 16:10-ի սահմաններում, ՀՀ ԱՆ «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Լոռու մարզի փրկարար ծառայության 911 հեռախոսահամարին եւ հայտնել, որ Վանաձոր քաղաքի Մ.Գոշի 6 հասցեում գտնվող Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Լուսինե Ալավերդյանի աշխատասենյակում ռումբ է տեղադրված:

Բացի այդ, Գառնիկ Բաղդասարյանը 2022 թվականի հոկտեմբերի 07-ին՝ ժամը 16:22-ի սահմաններում, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Լոռու մարզի փրկարար ծառայության 911 հեռախոսահամարին եւ հայտնել է, որ ռումբ է տեղադրել Լոռու մարզի դատախազ Կարեն Գաբրիելյանի աշխատասենյակում, որը գործի է դրվելու ժամը 23:50-ին:

Բացի այդ, Գառնիկ Բաղդասարյանը 2022 թվականի նոյեմբերի 02-ին՝ ժամը 16:11-ի սահմաններում, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Լոռու մարզի փրկարար ծառայության 911 հեռախոսահամարին եւ հայտնել, որ «Վանաձորի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքում ռումբ կա տեղադրված:

Բացի այդ, Գառնիկ Բաղդասարյանը 2022 թվականի նոյեմբերի 16-ին՝ ժամը 11:36-ի սահմաններում, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 911 հեռախոսահամարին եւ հայտնել է, որ ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության քննիչ Տիգրան Թադեւոսյանի աշխատասենյակում տեղադրված է պայթուցիկ սարք:

Բացի այդ, Գառնիկ Բաղդասարյանը 2022 թվականի դեկտեմբերի 02-ին՝ ժամը 14:16-ի սահմաններում, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Լոռու մարզի փրկարար ծառայության 911 հեռախոսահամարին եւ հայտնել, որ Սպիտակ քաղաքում գտնվող Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի շենքում՝ դատավոր Մարտին Արզումանյանի աշխատասենյակի ուղղությամբ, ռումբ է տեղադրված:

Բացի այդ, Գառնիկ Բաղդասարյանը 2022 թվականի դեկտեմբերի 21-ին՝ ժամը 15:49-ի սահմաններում, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն եւ հայտնել, որ Երեւան քաղաքի դատախազության շենքում ռումբ կա տեղադրված:

Բացի այդ, Գառնիկ Բաղդասարյանը 2022 թվականի դեկտեմբերի 30-ին՝ ժամը 15:04-ի սահմաններում, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով զանգահարել է ՀՀ արդարադատության նախարարություն եւ հայտնել, որ շենքի առաջին հարկում ռումբ կա տեղադրված:

Բացի այդ, Գառնիկ Բաղդասարյանը 2023 թվականի հունվարի 16-ին՝ ժամը 14:55-ի սահմաններում, «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի ընդհանուր օգտագործման համար նախատեսված հեռախոսահամարով

զանգահարել է ՀՀ ՆԳՆ ոստիկանության Լոռու մարզի օպերատիվ կառավարման կենտրոն եւ հայտնել, որ Վանաձոր քաղաքի Մխիթար Գոշի 8 հասցեում գտնվող ՀՀ ԱԱԾ Լոռու մարզային վարչության շենքում ռումբ կա տեղադրված:

Ձեռնարկված ստուգողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ Գ. Բաղդասարյանի կողմից հայտնած տեղեկություններն իրականությանը չեն համապատասխանել, այսինքն՝ այդկերպ տարածել է ահաբեկչության մասին սուտ տեղեկություններ:

Այս իրավիճակում հարց է առաջանում՝ ինչով է զբաղված Քրեակատարողական ծառայության ղեկավար կազմը՝ ի դեմս ծառայության պետ Սերգեյ Ատոմյանի, երբ հիմնարկում կալանավորները ահաբեկչության են դիմում:

ՎԱՐՈՒՅԹ

ԲԴԽ ՆԻՍՏԸ ԱՆՑԱՎ ԴՌՆՓԱԿ

Երեկ Բարձրագույն դատական խորհրդում Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Հարությունյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցի քննությանը փաստաբաններին ներս չեն թողել:

Փաստաբան Մարինե Ֆարմանյանը լրագրողների հետ զրույցում նշեց. «Մենք մի քանի իմ գործընկերների հետ ժամը 10:00-ին այստեղ էինք, որ մտնեինք դահլիճ, սակայն կարգադրիչները տեղեկացրին, որ հրահանգ կա վերեւ չթողնել, որովհետեւ վերեւում տեղ չկա: Այդ պահին ԲԴԽ նիստը սկսվել էր եւ դռնբաց էր ընթանում: Մեզ վերեւ չթողեցին:

Հասկանալի է, որ ԲԴԽ նիստերի դահլիճը փոքր է: Այդ պահին դա հասկացանք, բայց հետո լուր ստացանք, որ ԲԴԽ-ն որոշել է, որ դռնփակ անցկացնել նիստը: Հիմա մենք ուրիշ գործողություն ենք անում: Մենք փաստաբաններով ներգրավվում ենք՝ որպես Դավիթ Հարությունյանի շահերի պաշտպան, եւ որպես ներկայացուցիչ գնալու ենք նիստին մասնակցելու»,- ասաց Ֆարմանյանը:

Նշենք, որ այս պահին դատավոր Դավիթ Հարությունյանի շահերի պաշտպանությունը ստանձնելու պատրաստակամություն են հայտնել փաստաբաններ Լուսինե Մարտիրոսյանը, Ինեսա Պետրոսյանը, Զարուհի Նախշքարյանը, Միքայել Շխիմյանը, Արթուր Պիվազյանը, Մարինե Ֆարմանյանը, Հովսեփ Սարգսյանը, Գեորգի Մելիքյանը, Միհրան Պողոսյանը, Հրանտ Անանյանը, Երեմ Սարգսյանը, Հակոբ Ենոքյանը, Բենիկ Գալստյանը, Աբգար Պողոսյանը:

Հիշեցնենք, որ Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Հարությունյանի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել: Վարույթ հարուցելու հիմքը դատավորի տված հարցազրույցն է եղել: Խոսքը, մասնավորապես, ապրիլի 7-ին՝ Դատավորների ընդհանուր ժողովի օրը, լրագրողների հետ ունեցած ճեպազրույցի մասին է:

Նա անդրադարձել էր ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանի հայտարարությանը եւ այն անթույլատրելի համարել: Հիշեցնենք՝ ընդհանուր ժողովի օրակարգում ԲԴԽ դատավոր-անդամի ընտրության հարցն էր: Դրա նախօրեին ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը մամուլի քարտուղարի անունից հաղորդագրություն էր տարածել, որով, ըստ էության, փորձել էր ուղղորդել դատավորներին ընտրությունից առաջ: Դատավորներն, այդուհանդերձ, ԲԴԽ դատավոր անդամ չեն ընտրել Կարեն Անդրեասյանի թեկնածուին՝ Ռուբիկ Մխիթարյանին՝ իրենց քվեն տալով դատավոր Արշակ Վարդանյանին, որն ունի անկախ դատավորի համբավ:

ՈՂ Է ԿՐԱԿԱՀԵՐԹ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Արամ Ասատրյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2022թ. մարտի 7-ին իր կողմից ապօրինի ձեռք բերված եւ ոչնչով չպարզված մոդելի եւ 7.65 մմ տրամաչափի հրազենից՝ ատրճանակից, ապօրինաբար կյանքից զրկելու՝ սպանելու նպատակով դիտավորությամբ կրակահերթ է արձակել Արսեն Աշոտի Սարգսյանի ուղղությամբ՝ վերջինիս պատճառելով մարմնի տարբեր հատվածներում հրազենային վնասվածքներ,

սակայն Ա. Ասատրյանն իր կամքից անկախ հանգամանքներով չի կարողացել իրագործել իր դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը, որի ընթացքում նույն ատրճանակով արձակված կրակահերթերի արդյունքում հանրավտանգ եղանակով դիտավորությամբ վնասել է Ռոբերտ Ռաֆիկի Ներսիսյանին պատկանող «Ֆորդ Ֆոկուս 2.3» մակնիշի ավտոմեքենան եւ Արթուր Համբարձումի Քոլոյանին պատկանող «Հոնդա Աքորդ 2.01» մակնիշի ավտոմեքենան՝ պատճառելով համապատասխանաբար 60.000 ՀՀ դրամի եւ 50.000 ՀՀ դրամի գույքային վնաս: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ «Մալխաս ջազ» ակումբի եւ «Սմոքինգ» ռեստորանային համալիրի սեփականատեր Արսեն Սարգսյանը դեռեւս ցուցմունք չի տվել, քանի որ ի վիճակի չէ ցուցմունք տալ: Ավելին՝ մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ իրավապահները մի քանի վկաների են հարցաքննել, որոնք նշում են, թե որեւէ բան չեն տեսել:

2022 թվականի մարտի 7-ին կրակոցներ էին հնչել Երեւանում: Ժամը 02:10-ի սահմաններում ոստիկանության կենտրոնական բաժին ահազանգ է ստացվել, որ «մարմնի տարբեր հատվածներում հրազենային վնասվածք» ախտորոշմամբ իրենց մոտ է տեղափոխվել մի քաղաքացի: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վիրավորը քրեական աշխարհում հայտնի «օրենքով գող» Արմեն Կանեւսկոյի սանիկն է՝ Արսեն Սարգսյանը, որը հանրապետությունում հայտնի «Մալխաս ջազ» ակումբի եւ «Սմոքինգ» ռեստորանային համալիրի սեփականատերն է:

Պարզվել է, որ նշված շենքի բակում անհայտ անձը դեռեւս չպարզված հրազենից մի քանի կրակոց է արձակել Ա. Սարգսյանի ուղղությամբ, ապա դեպքի վայրից դիմել փախուստի: Դեպքի վայրում հայտնաբերվել են արնանման հետքեր եւ 2 հատ կրակված պարկուճ:

Նույն օրը՝ մարտի 7-ին, կրակոցներ էին հնչել Երեւանում: Ժամը 23:40-ի սահմաններում Մալաթիայի բաժին ահազանգ է ստացվել, որ մարմնի տարբեր հատվածներում հրազենային վնասվածքներով իրենց մոտ է տեղափոխվել մեկ անձ: Դեպքը տեղի է ունեցել Անդրանիկի փողոցի 115 շենքի 1-ին հարկի շքամուտքի դիմաց, որտեղ անհայտ անձը չպարզված հրազենից կրակոցներ է արձակել Ա. Ներսիսյանի ուղղությամբ:

Վիրավորը նախկինում սպանության համար դատապարտված, վերջերս բանտից ազատված, քրեական պատմություններով հայտնի «զոն նայող Անդուլիկն է»: Եվ, ահա, «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ այս երկու կրակոցները միմյանց հետ կապ ունեն, եւ իրավապահ համակարգը կոնկրետ տեղեկություններ ունի, որ քրեական աշխարհում արշալույսները խաղաղ չեն, քրեական հեղինակությունները կամ «օրենքով գողերը» դուրս են եկել միմյանց դեմ: Փաստ է մեկ բան, որ Մալաթիայում եւ Կենտրոնում հնչած կրակոցները ուղղված են քրեական հեղինակությունների եւ «օրենքով գողի» դեմ, եւ մեկը մյուսից վրեժ է լուծում:

Նյութերը՝ ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունիսի 16-ից 19-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 132 դեպք, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՍԱՀՄԱՆԱԳԱՏՈՒ ԻՐԱՎԻՃԱԿՆ ՈՒ ՓԱՌԱՏՈՆՆԵՐԸ

Հայաստանի սահմաններին ադրբեջանական զինուժը պարբերաբար ոտնձգությունների է դիմում, կրակ բացում: Հունիսի 13-ին ԱՄՆ-ն ՀՀ-ում գտնվող իր քաղաքացիներին հորդորել է չայցելել հայ-ադրբեջանական սահմանային հատվածներ: Դեսպանատան տարածած հաղորդագրության մեջ ներառված սահմանամերձ վայրերից են նաեւ Տավուշի մարզի Վարագավանից արեւելք Հ37 ավտոճանապարհը, Տավուշի մարզի Նավուր գյուղից արեւելք Հ36 ավտոճանապարհը: Նման անհանգստացնող իրավիճակ է, սակայն, կարծես թե, վտանգավոր, անհանգստացնող բան չկա, սահմանամերձ Տավուշի մարզում գաստրոնոմիական փառատոններ են կազմակերպում: Հունիսի 17-ին Դիլիջան քաղաքում կայացավ «Միմինո» հայ-վրացական մշակութային-խոհարարական փառատոնը, որտեղ ներկայացված էին հայկական եւ վրացական մշակույթն ու խոհանոցների բազմազանությունը, պարերն ու երգերը, արվեստի եւ արհեստագործական աշխատանքները: Փառատոնը կազմակերպել է «Հայ խոհարարական ավանդույթների զարգացման եւ պահպանման» ՀԿ-ն՝տուրիզմի հայկական ֆեդերացիայի հետ համատեղ, էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության կոմիտեի աջակցությամբ: Հունիսի 24-ին Նիկոլ Փաշինյանի հայրենի Ենոքավան գյուղում ինքներորդ անգամ կանցկացվի Հայաստանի խոտաբույսերի եւ ծաղիկների «Հայ Բույս 2023» փառատոնը, որը տեղի է ունենալու Yell Extreme Park-ի եւ APAGA Resort-ի մոտ գտնվող ընդարձակ կանաչապատ բացատում. փառատոնի շրջանակում միաժամանակ անցկացվելու են տարբեր ժամանցային ծրագրեր մեծերի եւ փոքրերի համար:

ՊԱՀԱԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Իջեւան համայնքի սահմանամերձ Վազաշեն գյուղի բնակիչներ Սուրիկ Ղազարյանը, Գրիգոր Սարհատյանը, Հովիկ Գյոզալյանը եւ Սամվել Ճոկլինյանը գումար բռնագանձելու պահանջով ընդդեմ «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ի հայցադիմում են ներկայացրել Տավուշի մարզի առաջին ատյանի դատարան: Դատարանի 2022թ. մայիսի 4-ի որոշմամբ՝ հայցադիմումն ընդունվել է վարույթ: Հայցադիմում ներկայացրած 4 անձինք Վազաշեն գյուղի անտառում գտնվող բազմամետաղ հանքավայրում պահակություն են արել, որի դիմաց «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ն նրանց աշխատավարձի պարտքեր է ունեցել: Վազաշենի սահմանամերձ անտառում գտնվող հանքավայրում ներկայումս աշխատանքներ չեն իրականացվում: 2012-2017թթ.-ին «Պոլիմետը» Վազաշենի ոսկու հանքավայրի տարածքում երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու արտոնագիր է ունեցել: 2023թ. հունիսի 16-ին Նոյեմբերյան քաղաքում Տավուշի առաջին ատյանի դատարանի դատավոր Նարինե Անանյանը վճռել է քաղաքացիական հայցը բավարարել, «Պոլիմետ կորպորացիա հայ-կանադական համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ից հօգուտ Սուրիկ Ղազարյանի, Գրիգոր Սարհատյանի, Հովիկ Գյոզալյանի եւ Սամվել Ճոկլինյանի բռնագանձել յուրաքանչյուրին 1 միլիոն 200 հազար դրամ՝ որպես չվճարված աշխատավարձ, այդ ընկերությունից բռնագանձել 144 հազար ՀՀ դրամ պետական տուրքի գումար:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՆԱԽԱԳԻԾ

ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ՝ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԿՈՒՐՍԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻՆ

Գործադիրի նիստում հավանության է արժանացել ««Հանրակրթության մասին» օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծին հավանություն տալու եւ անհետաձգելի համարելու մասին ՀՀ կառավարության որոշումը:

ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանի խոսքով՝ նախատեսվող փոփոխությունը կարեւոր օրենսդրական նախաձեռնություն է, որով ուսուցիչներին գործուղման հնարավորություն է տրվում մարզային բոլոր այն բնակավայրեր, որոնցում դրա կարիքը կա: Նախկինում այս կարգավորումը սահմանափակված էր միայն սահմանամերձ եւ բարձրլեռնային բնակավայրեր գործուղմամբ:

Ուսուցիչների գործուղման կարգի լիազորող նորմում ավելացվել է «մարզերի» բառը՝ հստակություն մտցնելով ոչ միայն գործընթացի ֆինանսավորման համար, այլեւ կարգավորելով ուսուցչի բնակության վայրից կոնկրետ ՀՀ մարզեր գործուղվելու հարցը:

«Այս նախաձեռնությամբ հնարավորություն ենք տալու նաեւ գյուղական բնակավայրերի դպրոցներում աշխատելու ուսուցչի կրթություն ստացող ավարտական կուրսի ուսանողներին: Բոլոր օրենսդրական նախաձեռնություններն արվում են՝ արդիական ենթակառուցվածքներին զուգահեռ որակյալ ուսուցիչներ ունենալու համար»,-նշել է նախարարը:

Նախագծով առաջարկվում է դրույթ ավելացնել՝ ուսուցչի որակավորում շնորհող բարձրագույն ուսումնական հաստատության ավարտական կուրսի ուսանողին հնարավորություն ընձեռելով աշխատելու գյուղական բնակավայրի ուսումնական հաստատությունում:

Ըստ նախագծի՝ վարչատնտեսական համակարգողի պաշտոնին հաստատությունից կարող են հավակնել միայն տնօրենը կամ փոխտնօրենը. հաշվապահը կամ մանկավարժական այլ աշխատող, ինչպես նաեւ ղեկավարման փորձ չունեցող անձը չի կարող դիմել: Փոխարենը՝ նվազեցվել են աշխատանքային ստաժի ժամկետները՝ հավակնորդների շրջանակը ընդլայնելու հնարավորություն ընձեռելով: Օրենսդրական փոփոխությամբ նախատեսվում է վարչական աշխատողների դասավանդման մասով տալ համապատասխան կարգավորում՝ թափուր տեղը համալրվելու պայմանով:

Օրենքում «օրինակելի ուսումնական պլան» կապակցությունը փոխարինվում է «ուսումնական պլանի ընդհանրական կառուցվածք եւ ուսումնական պլանի կազմման կանոններ» հասկացությամբ՝ հիմք ընդունելով հանրակրթության պետական նոր չափորոշչի տրամաբանությունը: Դրա համաձայն՝ նոր չափորոշչի ներդրմանը զուգահեռ համապատասխան դասարանների համար հաստատությունն ինքնուրույն է կազմելու իր ուսումնական պլանը՝ չափորոշչի եւ ուսումնական պլանի ընդհանրական կանոնների եւ ուղեցույցի հիման վրա, հաշվի առնելով սովորողների նախասիրություններն ու նրանց կողմից ուսումնասիրվող առարկաների եւ մասնագիտության ընտրությունը: Դեռեւս նոր չափորոշչին չանցած դասարանների համար կհաստատվի օրինակելի ուսումնական պլան:

Միջին մասնագիտական կրթություն ունեցող մասնագետները կամավոր ատեստավորման անհրաժեշտ արդյունք ցուցաբերելու դեպքում իրավունք կստանան շարունակելու մասնագիտական գործունեությունը ինչպես տվյալ հաստատությունում, այնպես էլ այլ հաստատություն դիմելիս: Ուսուցչի պաշտոնին համապատասխանող եւ ուսուցիչ չաշխատող անձանց կտրվի կամավոր ատեստավորմանը մասնակցելու հնարավորություն: Այդպիսով, կստեղծվի մասնագետների բազա, որոնցում ներգրավված անձինք հետագայում կձգտեն մտնել հաստատություններ՝ հաշվի առնելով վարձատրության բարելավման հնարավորությունը: Կարգավորումը կխթանի որակյալ մասնագետների մուտքը դպրոցներ:

Մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական աշխատողները, կամավոր ատեստավորմանը մասնակցելով, մասնագիտական զարգացման եւ վարձատրության բարձրացման հնարավորություն կունենան: Գործընթացը նախատեսվում է մեկնարկել 2024 թվականից:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴԵՂԱՏՈՄՄԵՐԸ՝ ԴԺՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌ

Էլեկտրոնային դեղատոմսով հակաբիոտիկների նշանակման համակարգն արդեն գործում է: Ամիսներ առաջ ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ Արտակ Ջումայանը հայտնել էր, որ կսահմանվի որոշ դեղերի էլեկտրոնային տարբերակով դուրսգրման պարտադիր պահանջ: Ցուցակում առաջնահերթությունը տրվել էր հակաբիոտիկներին:

Նրա շեշտադրմամբ՝հակաբիոտիկների բաց շրջանառությունը վնասում է քաղաքացիների առողջությանը, իսկ էլեկտրոնային տարբերակով շրջանառությունը վերահսկելը կլինի ավելի հեշտ ու կբերի վերահսկողության մակարդակի բարձրացման:

Ներդրվող ծրագրի համաձայն՝ եթե էլեկտրոնային տարբերակով հակաբիոտիկի դեղատոմս չլինի, դեղատունն իրավունք չի ունենա վաճառել:

Առաջին հայացքից այս դրական փոփոխությունը իրականում բնակիչների համար առաջացնում է բազմաթիվ խնդիրներ: Բնակչության զգալի մասը, որոնք գրեթե մշտական առնչություն ունեն դեղամիջոցների հետ, բողոքում են այս փոփոխությունից՝նշելով, որ այսպես ավելի է դժվարանալու իրենց առօրյան:

Պարզ է, որ մեծահասակները եւ, առհասարակ, բնակչության մի զգալի մասը դժվարանում են օգտվել էլեկտրոնային տարբերակով ցանկացած գնում կատարելիս, ավելին՝ նրանց բացարձակ անհասանելի ու անհասկանալի են ինտերնետային հարթակները:

Բնակիչներից մեկի խոսքով՝ այսկերպ դեղատներից օգտվելը իր համար դառնում է իրական փորձություն այն դեպքում, երբ շատ հաճախ հենց ինքն էր իր համար անհրաժեշտ դեղամիջոցները գնում: Իսկ փոփոխությունից հետո հազիվ թե կարողանա օգտվել, ստիպված է ուրիշներին խնդրել իր փոխարեն գնել:

ՄԱՇԱ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՆՈՐ ԴԵԿԱՆՆԵՐ՝ ԵՊՀ–ՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝Երեւանի պետական համալսարանում միանգամից չորս դեկանի ընտրություն է տեղի ունեցել:

Նոր դեկանի նշանակումներ են արվել Ֆարմացիայի ինստիտուտում, Բանասիրական ֆակուլտետում, Սոցիոլագիայի ֆակուլտետում եւ Տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետում:

Ընտրությունների արդյունքում, առաջին անգամ ԵՊՀ-ում նշանակվել է կին դեկան՝ Աննա Մկրտչյանը՝ Ֆարմացիայի ինստիտուտում:

«Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին, որ Բանասիրական ֆակուլտետում դեկան է ընտրվել Արշալույս Գալստյանը, Սոցիոլոգիայի դեկան՝ Արթուր Մկրտչյանը, իսկ Տնտեսագիտության եւ կառավարման ֆակուլտետում՝ Կառլեն Խաչատրյանը:

Մեր աղբյուրները փոխանցում են, որ այս ամենը արվում է նրա համար, որ կոծկվեն ԵՊՀ-ում կաշառակեր դեկանների անունները, քանի որ հանրության շրջանում արդեն դասախոսական անձնակազմի մասին վատ կարծիք է ձեւավորվել, եւ լավ չեն արտահայտվում ԵՊՀ-ի պրոֆեսորադասախոսական կազմի մասին: Այսկերպ մայր բուհը փորձում է ամեն ինչ անել, վերականգնել լավ համբավը՝դասախոսների միջից դեկան նշանակելով անձանց, որոնք լավ անուն ունեն ուսանողության շրջանում եւ կաշառակեր չեն, ինչպես, օրինակ, Բանասիրական ֆակուլտետի նորանշանակ դեկան Արշալույս Գալստյանը, ում ուսանողությունը ճանաչում է որպես բանիմաց ու խստապահանջ դասախոսի, որն ուսանողին գնահատում է օբյեկտիվ:

● *Անցած 3 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է 41 ՃՏՊ. 4 մարդ զոհվել է, 51-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Krisp-Ի ԵՎ WEB-Ի ՀԱՄԱՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ ՄԻԱՑԵԼ ԵՆ Team-ԻՆ

Krisp-ի եւ WEB-ի համահիմնադիրները միացել են Team Telecom Armenia -ին՝ որպես տնօրենների խորհրդի անկախ անդամներ:

Krisp-ի համահիմնադիր Արտավազդ Մինասյանը եւ WEB ընկերության համահիմնադիր Ալբերտ Տոնեյանը դարձել են Team Telecom Armenia-ի տնօրենների խորհրդի անկախ անդամներ: SS եւ տելեկոմ ոլորտում հաջողված նախագծեր իրականացրած փորձառու մասնագետները մասնակցելու են ընկերության ռազմավարական նախագծերի մշակմանը եւ կորպորատիվ կառավարմանը:

Team Telecom Armenia-ի տնօրենների խորհուրդը գլխավորում է Ալեքսանդր Եսայանը, անդամներն են Հայկ Եսայանը եւ Արամ Բարսեղյանը, անկախ անդամներն են Ալբերտ Տոնեյանն ու Արտավազդ Մինասյանը:

Team Telecom Armenia-ի տնօրենների խորհրդի նախագահ Ալեքսանդր Եսայանը, կարեւորելով անկախ անդամների ներգրավվումը ընկերության համար այս խորհրդանշական փուլում, նշեց, որ սա թափանցիկ գործելաոճին ու ռազմավարական ծրագրերը բազմաշերտ դիտարկելուն ուղղված քայլ է:

«Ուրախ եմ, որ մեր թիմը համալրվում է նման մասնագետներով, որոնք ունեն թե՛ միջազգային եւ թե՛ տեղական շուկայում լայնամասշտաբ ծրագրեր իրականացնելու եւ հաջողելու փորձ: Վստահ եմ՝ մեր համատեղ աշխատանքի արդյունքում կարողանալու ենք ստեղծել տելեկոմ եւ SS ոլորտների համադրությամբ լիարժեք էկոհամակարգ, որը կբավարարի ժամանակակից սպառողի պահանջները»:

«Ընկերությունը ռազմավարական նշանակություն ունի Հայաստանի տնտեսությունը զարգացնելու եւ կարեւորագույն ենթակառուցվածքներ ստեղծելու համար: Համոզված եմ, որ իմ մասնակցությամբ կամուրջ կդառնամ՝ Team-ի եւ բաձր տեխնոլոգիական համայնքի միջեւ», - նշեց Արտավազդ Մինասյանը:

Խոսելով խորհրդին միանալու շարժառիթների մասին՝ Ալբերտ Տոնեյանն ասաց, որ ցանկանում է տելեկոմ ոլորտում իր երկարամյա փորձը եւ համարձակ մտահղացումները ներդնել Team-ում նոր նշաձողեր սահմանելու եւ մեծ արդյունքների հասնելու համար:

Արտավազդ Մինասյանը ֆիզմաթ գիտությունների թեկնածու է, հանդիսանում է Krisp եւ 10WEB ընկերությունների համահիմնադիրը եւ BigStory վենչուրային ֆոնդի կառավարող գործընկերը: Նա ներգրավել է $32 միլիոն կապիտալ: Մինասյանը նաեւ իրականացնում է ակտիվ հանրային գործունեություն. ԱՏՁՄ եւ «Այբ» հիմնադրամների հոգաբարձուների խորհրդի անդամ է:

Ալբերտ Տոնեյանը ֆիզմաթ գիտությունների թեկնածու է: Նա Հայաստանում առաջին ինտերնետ ծառայություն մատուցող ընկերություններից WEB-ի համահիմնադիրն է եւ տնօրենը, «.հայ» եւ «.am» դոմեյնների ռեեստր «Ինտերնետ հանրություն» ՀԿ-ի փոխնախագահը, ArmIX հիմնադրամի նախագահը ու «ՀՀ ինտերնետ կառավարման հանձնաժողով»-ի անդամը:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ: 2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝ 25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՐՆԵՐ, ՈՐՏԵՂԻՑ ԳԱԼԻՍ ԵՆ ՀԱՅԱՍՏԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է Տուրիզմի հայկական ֆեդերացիայի նախագահ Մեխակ Ապրեսյանի հետ՝ պարզելու Հայաստանի զբոսաշրջության զարգացման տեմպերը եւ անհրաժեշտ քայլերը:

«Նախորդ տարիների համեմատ՝ տուրիզմի տեմպը աճել է. դրա մասին խոսում են նաեւ նախորդ տարիներին հրապարակված եռամսյակային տվյալները: Նախորդ տարիների համեմատ՝ ունենք քանակական աճ, բայց կարեւոր է խոսել այցերի որակի մասին, ինչ դրական ազդեցություններ ունեն:

Բայց շատ կարեւոր է, որ զբոսաշրջության աճն իր ամբողջ ծավալով կարողանա ազդեցություն ունենալ տնտեսական, սոցիալական, մշակութային եւ բնապահպանական ոլորտներում: Որքան էլ թվերը գոհացուցիչ են, այնուամենայնիվ, սրանք հիմնականում անհատական այցելություններ է. զբոսաշրջության մասնաբաժինը շատ քիչ է, եւ այս ամենը շատ մտահոգիչ է»:

Ապրեսյանը նշեց, որ զբոսաշրջիկների համար Հայաստանում հատուկ նախընտրելի վայրեր չկան, տարբեր նախասիրություններ ունեցող մարդիկ կարող են տարբեր վայրեր ընտրել. «Չենք կարող մի ուղղությունը մեկից գերադասել: Յուրաքանչյուր մարդ, համայնք, քաղաք կամ կառույց առանձնահատուկ է եւ հետաքրքիր է յուրովի: Վայրերը կախված են նաեւ այցելության նպատակից. հանգստի՞ նպատակով են այցելում, թե՞ այլ նպատակներ կան:

Ես կդժվարանամ ասել հստակ վայրեր, որոնք նախընտրում են այցելել զբոսաշրջիկները: Շատ կարեւոր է, որ մենք հավասարապես բոլոր մարզերով զբոսաշրջային ուղղություններ ապահովենք, եւ մեր ծրագրերն էլ այնպես կազմակերպենք, որ որեւէ մարզ եւ համայնք չտուժի: Մենք հույս ունենք նաեւ, որ շուտով նաեւ կվերականգնվի դեպի Արցախ այցելությունը»:

Ապրեսյանի խոսքով՝ այժմ էլ կան զբոսաշրջային խմբեր, որոնք այցելում են Վայց ձորի եւ Սյունիքի մարզեր, սակայն հարցը նրանում է, որ հիմնականում եվրոպական երկրներում եւ մեզ համար նպատակային շուկա հանդիսացող երկրներում տեղեկատվությունը մեր երկրի վերաբերյալ ներկայացված է որպես վտանգավոր գոտի. «Մենք պետք է մեր բոլոր ջանքերը գործադրենք՝ դիվանագիտական ուղիներով եւ սփյուռքի ներուժը օգտագործելով, պետական եւ մասնավոր հնարավոր բոլոր գործիքները օգտագործելով: Այս գործողությունները մեզ թույլ կտան հստակ տեղեկատվություն տալ համաշխարհային շուկայի մեր այցելուներին, որ մեր ներկայացուցչությունն ավելի իրական լինի»:

Մեխակ Ապրեսյանը նշեց նաեւ, որ Հայաստանում զբոսաշրջության վրա մեծ դեր են ունենում այն մեծ եւ մասշտաբային միջոցառումները, որոնք անցկացվում են Հայաստանում եւ լուսաբանվում միջազգային մամուլի կողմից: Ըստ Ապրեսյանի՝ զբոսաշրջության զարգացման վրա մեծ ազդեցություններ են ունեցել պատերազմը եւ Կորոնավիրուսի համաճարակը:

«Եթե սրացումներ չլինեն համաճարակի կամ պատերազմների, հնարավոր է՝ այս տարի զգալի աճ ունենանք զբոսաշրջության ոլորտում: Քանի որ Չինաստանն արդեն բացել է իր սահմանները համավարակից հետո, մենք այս տարի տուրիստներ ենք ակնկալում նաեւ Չինաստանից եւ Ճապոնիայից»:

Ըստ Տուրիզմի հայկական ֆեդերացիայի նախագահ Մեխակ Ապրեսյանի՝ ՀՀ տուրիստների 50%-ը ռուսներ են: Թուրքիայից այցելություններ մինչեւ 2020 թվականը շատ են եղել. դրանք հասկանալի պատճառներով նվազել են, բայց կան, պարզապես դրանք զբոսաշրջության շատ փոքր մասն են կազմում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

ՄՐՑՈՒՅԹԻ ԵՐԿԲՈՐԴ ՓՈՒԼԸ

Երեւանի քաղաքապետարանը Կադաստրի կոմիտեի հետ կկազմակերպի քննարկում Կոնդ թաղամասի բնակիչների տների եւ հարակից տարածքների սահմանների ճշտման եւ սեփականության վկայականներ տրամադրելու նպատակով:

Երեւանի քաղաքապետարանից հայտնում են, որ կհայտարարվի թաղամասի վերակառուցման հայեցակարգի միջազգային բաց մրցույթի երկրորդ փուլը: Աշխատանքային հերթական խորհրդակցության ժամանակ Երեւանի փոխքաղաքապետ Տիգրան Ավինյանը հանձնարարել է գործընթացը պահել մշտական հսկողության ներքո:

«Սա քաղաքապետարանի ամենակարեւոր ծրագրերից է, եւ համայնքը պետք է նախաձեռնող լինի: Առաջինը, որ պետք է լուծենք, կոնդեցիների իրավունքների պաշտպանության հարցն է, փաստացի իրենց սեփականության իրավունքի գրանցումն է այն սահմաններով, որով իրենք որպես փաստ տիրապետել են տարիներով, որպեսզի հետագայում կառուցապատման ծրագիր իրականացնելու ժամանակ իրենք խնդիր չունենան կառուցապատողի, օտարողի հետ, իրավունքների խախտման հետ կապված հարցեր չլինեն»,-նշել է փոխքաղաքապետ Ավինյանն ու հանձնարարել արդեն իսկ եղած հայեցակարգով դիտարկել նաեւ Նորագյուղի վերակառուցման առաջարկը:

ՍՈՍԻՆԵՐՈՎ ԱՅԳԻ՝ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Տեւական ժամանակ է՝ Երեւանի Աջափնյակ վարչական շրջանում՝ Հյուսիս - Հարավ մայրուղու հարեւանությամբ, ընդհանուր 140 հա տարածքի վրա «Դեֆանս հաուզինգ ինվեստ» ՓԲԸ-ն իրականացնում է աննախադեպ քաղաքաշինական ներդրումային խոշոր ծրագիր, որի նմանը չկա ոչ միայն Անդրկովկասում, այլ նաեւ ԱՊՀ երկրներում: Ընդհանուր ծրագրով «Դեֆանս հաուզինգ ինվեստ» ՓԲԸ-ն ունի միջազգային չափանիշներին համապատասխան հաստատված կառուցապատման գոտիավորված նախագիծ՝ միջինացված 22 % կառուցապատման մակերեսով:

Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, տարածքի մնացած մասը կազմելու են այգի-պուրակները, ջրային մակերեսները եւ ճանապարհները: Թե՛ երեւանցիները, ինչու չէ, նաեւ Երեւան այցելած զբոսաշրջիկները, երբ Սիլիկյան թաղամասից անցնում են դեպի Հարավարեւմտյան թաղամաս կամ ժողովրդին հայտնի 4-րդ գյուղ, ճանապարհի աջակողմյան հատվածում նկատում են վերամբարձ կռուկների մի ամբողջ «բանակ», ինչպես նաեւ մեծ թվով շինարարներ:

Ընդհանուր շինարարական աշխատանքներում ներգրավված է ավելի քան 4 հազար աշխատակից, ինչը սոցիալական այս ծանր պայմաններում «Դեֆանս հաուզինգ ինվեստ» ՓԲ ընկերության կողմից մեծ օժանդակություն է այդ 4 հազար ընտանիքներին, քանի որ նրանք իրենց քրտինքով կատարած աշխատանքի դիմաց կանոնավոր ստանում են աշխատավարձ, ինչից, ի դեպ, աշխատակիցները գոհ են:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ նշված տարածում, որը մի հսկայական շինհրապարակի է վերածվել, ու ժողովուրդն արդեն կոչում է «Քաղաք՝ քաղաքի մեջ», ընկերության կողմից ստեղծվում են կանաչ գոտիներ, այգի-պուրակներ: Մոտ 2,5 կմ-անոց հատվածում արդեն տնկվել են Իտալիայից հատուկ Հայաստան բերված Արեւմտյան սոսիներ, եւ դեռ մի այդքան էլ տնկվելու է:

Շինարարությանը զուգահեռ ընկերության աշխատակիցները՝ գյուղատնտես Դերենիկ Հովհաննիսյանի գլխավորությամբ, ամեն օր խնամում են Արեւմտյան սոսիները, ու, դեռ շինարարությունը չավարտած, այդ կանաչապատ հատվածը վերածվելու է «մինի» անտառի: Պուրակում նաեւ անցկացվել է ջրագիծ, որով խնամվելու են կանաչ գոտիներն ու տնկիները, իսկ ծառերը՝ կանաչ տերեւներով, տեսանելի են անգամ Հարավարեւմտյան թաղամասի բարձրահարկ շենքերից. մարդիկ անուն են դրել այդ արահետին՝ ասելով. «Եթե աշխարհը հպարտանում էր Շամիրամի կախովի այգիներով, ապա ԱՊՀ երկրներում նախանձելու են այս մի քանի կմ-անոց կանաչ դրախտի վերածված ճեմուղուն»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՎԵՐԱԲԱՑՈՒՄ

ՆՈՐԱՑՎԱԾ ՄՇՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Վերանորոգումից հետո վերաբացվել է Ռուսական արվեստի թանգարանը (պրոֆեսոր Ա. Աբրահամյանի հավաքածու)՝ այցելուներին ներկայանալով նորացված մշտական ցուցադրությամբ:

Թանգարանի մշտական ցուցադրության բացման արարողությանը ներկա էին ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, արվեստագետներ, մշակույթի գործիչներ, գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ, արվեստասեր հանրություն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը ողջունել է ներկաներին եւ նշել, որ Արամ Աբրահամյանի 125-ամյակի հոբելյանական տարվան ընդառաջ թանգարանն այցելուներին է ներկայանում վերանորոգված, նոր լուսավորությամբ եւ նորացված մշտական ցուցադրությամբ:

«Թանգարանների ոլորտներում պետական քաղաքականության հիմնական խնդիրներից է թանգարանների արդիականացումն ու թանգարանային միջազգային չափանիշներին համապատասխան ցուցադրությունների կազմակերպումը: Միաժամանակ, ՀՀ կառավարությունը կարեւորում եւ խրախուսում է պետություն-մասնավոր հատված համագործակցությունը: Այս համատեքստում կարեւորում ենք Ռուսական արվեստի թանգարանի եւ «Դի Սի Փարթներ» ընկերության միջեւ համագործակցությունը»,- ընդգծել է Ալֆրեդ Քոչարյանը եւ շնորհակալություն հայտնել գործընկերներին՝ համագործակցության եւ վերանորոգման աշխատանքներին աջակցելու համար:

Նախարարի տեղակալը նշել է՝ հատկանշական է, որ դեռեւս նախորդ տարի Ռուսական արվեստի թանգարանի եւ Պետական Տրետյակովյան պատկերասրահի միջեւ սկիզբ առած համագործակցության շրջանակում թանգարանի նոր ցուցադրության հայեցակարգի մշակման ու էքսպոզիցիոն աշխատանքներում ներգրավվել է Տրետյակովյան պատկերասրահի գիտական աշխատակազմը. «Այս համագործակցության արդյունքում 2024 թվականին Արամ Աբրահամյանի 125-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շրջանակում նախարարության աջակցությամբ պատկերասրահում կցուցադրվեն Արամ Աբրահամյանի աշխատանքները»:

Ռուսական արվեստի թանգարանի տնօրեն Մարինե Մկրտչյանի խոսքով՝ օրը տոնական է, քանի որ վերանորոգված թանգարանն իր դռներն է բացել այցելուների առջեւ նորացված մշտական ցուցադրությունով. «Նորացված ցուցադրության բացմամբ մեկնարկում է Սոցիալիստական աշխատանքի հերոս, ԽՍՀՄ պետական մրցանակի դափնեկիր, խորհրդային բժշկության առաջատար ներկայացուցիչ, պրոֆեսոր Արամ Աբրահամյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումների շարքը: Տարվա ընթացքում կկազմակերպվեն տարբեր ցուցահանդեսներ, միջոցառումներ, իսկ հոբելյանական տարին կամփոփի Տրետյակովյան պատկերասրահում Արամ Աբրահամյանին նվիրված ցուցահանդեսի բացմամբ»:

Նշենք, որ Ռուսական արվեստի թանգարանը (պրոֆեսոր՝ Ա. Աբրահամյանի հավաքածու) հիմնադրվել է պրոֆեսոր Արամ Յակոբի Աբրահամյանի անձնական հավաքածուի հիման վրա: Այն անգին նվերն է իր պատմական հայրենիք Հայաստանին:

Թանգարանի հավաքածուն ներկայացնում է ռուսական, ինչպես նաեւ համաշխարհային արվեստի պատմության համար չափազանց կարեւոր եւ առանձնահատուկ ժամանակաշրջանի՝ 19-րդ դարի վերջի 20-րդ դարասկզբի գեղանկարչության, գրաֆիկայի, դեկորատիվ կիրառական արվեստի եւ բեմանկարչության վարպետների գործերը:

Ցուցադրված են այնպիսի արվեստագետների գործեր, ինչպիսիք են Կ. Կորովինը, Վ. Սերովը, Կ. Սոմովը, Վ. Բորիսով-Մուսատովը, Մ. Վրուբելը, Մ. Նեստերովը, Բ. Կուստոդի—ը, Ա. Բենուան, Ն. Գոնչարովան, Կ. Պետրով-Վոդկինը, Ն. Ռերիխը, Ա. Գոլովինը, Ե. Լանսերեն, Մ. Վոլոշինը, Ռ. Ֆալկը, Պ. Կոնչալովսկին, Պ. Կուզնեցովը, Ա. Լենտուլովը, Մ. Սարյանը, Զ. Սերեբրյակովան, Ս. Սուդեյկինը, Ա. Տիշլերը եւ այլք:

Հեղինակները ներկայացված են ըստ անդամակցած արվեստի միությունների՝ «Արվեստի աշխարհ», «Երկնագույն վարդ», «Բուբնովի վալետ», «Ավանակի պոչ», «Ռուս նկարիչների միություն» եւ այլն:

Ռուսական արվեստի թանգարանն իր նշանակությամբ կարելի է դասել ռուսական մշակույթի ուսումնասիրության համաշխարհային կենտրոնների շարքին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԼԱՎԱԳՈՒՅՆ ՖՈՒՏԲՈԼԻՍՏԸ

Իսպանիայի հավաքականի կիսապաշտպան Ռոդրին ճանաչվել է Նիդեռլանդներում անցկացված Ազգերի լիգայի եզրափակիչ մրցաշարի լավագույն ֆուտբոլիստ. հաղորդում է ՈՒԵՖԱ-ի մամուլի ծառայությունը: Իսպանացիները նվաճել են գավաթը:

Ռոդրին մասնակցել է Իտալիայի դեմ կիսաեզրափակիչին (2:1) եւ Խորվաթիայի դեմ եզրափակիչին (0:0, 11մ 5:4)՝ դիպուկ իրացնելով հետխաղային 11-մետրանոցը: Նա ճանաչվել էր նաեւ Իտալիայի դեմ հանդիպման լավագույն խաղացող:

«Մանչեսթեր Սիթիի» կազմում Ռոդրին ճանաչվել էր Չեմպիոնների լիգայի եզրափակիչի եւ մրցաշրջանի լավագույն խաղացող:

Իսպանիայի հավաքականը 2012թ. Եվրոպայի չեմպիոն դառնալուց հետո առաջին անգամ տիտղոս նվաճեց:

ԹԻՄԱՅԻՆ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՌԱՋԻՆԸ

Նարեկ Նիկողոսյանը (71 կգ) նվաճեց Ալբանիայում անցկացված ազատ ոճի ըմբշամարտի Եվրոպայի պատանեկան առաջնության ոսկե մեդալը:

Արծաթե մեդալակիրներ դարձան Արման Հարությունյանը (48 կգ), Սամվել Գեւորգյանը (55 կգ), Սաշա Պետրոսյանը (51կգ), Ռազմիկ Եփրեմյանը (80 կգ) եւ Հենրիկ Հայկյանը (110 կգ), բրոնզե մեդալ նվաճեցին Վլադիմիր Ազարյանը (65 կգ) եւ Վարուժան Հովհաննիսյանը (92 կգ). հաղորդում է ՀԸՖ-ի մամուլի ծառայությունը:

Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ ըմբշամարտի հավաքականը հաղթեց թիմային պայքարում: Այս հաջողությանը Հայաստանի ոչ մի տարիքային խմբի հավաքական չէր հասել:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑ

Երեւանի «Ուրարտու» ֆուտբոլային ակումբը եւ կիսապաշտպան Դավիթ Խուրցիձեն երկկողմ համաձայնությամբ դադարեցրել են համագործակցությունը:

Այս մասին հայտնում է ակումբի մամուլի ծառայությունը: Ռուսաստանցի ֆուտբոլիստն «Ուրարտու» էր տեղափոխվել 2022 թվականի աշնանը:

Խուրցիձեն «Ուրարտու»-ի կազմում 31 հանդիպման է մասնակցել ու 4 գոլի հեղինակ դարձել: 2022/23 մրցաշրջանում նա «Ուրարտու»-ի հետ դարձել է Հայաստանի չեմպիոն ու գավաթակիր:

ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐ

ԲՐԵԴ ՓԻԹԸ ՊԱՏՄՈՒՄ Է

Դերասանը կատաղել է դստեր ծննդյան տարեդարձը ճնորհավորելու անկարողության պատճառով:

Նա վստահ է, որ նախկին կինը միտումնավոր է որոշել իրեն զայրացնել. «Բրեդը շատ էր ցանկանում Շայլոյի ծննդյան տարեդարձն անցկացնել նրա հետ, բայց բանը նույնիսկ դրանում չէ: Իհարկե, նա սպասումներ չունի, բայց դերասանը վստահ է, որ Անջելինան տարել է դստերը, որպեսզի զայրացնի իրեն», - կիսվել է Փիթի շրջապատի աղբյուրներից մեկը:

Հոլիվուդյան մաչոն շատ է անհանգստացած, բայց դեռ ոչինչ անել չի կարող: Նախկին ամուսինների խնամակալության հետ կապված վարույթը շարունակվում է, մինչդեռ զույգի երեխաներից երեքն արդեն չափահաս են դարձել: Փիթն այժմ սպասում է, որ նույնը տեղի ունենա մնացած երեխաների հետ. հայտնում է OK!-ը:

Փիթն ու Ջոլին բաժանվել են 2016թ.-ին: «Ջերսաշրջիկ» ֆիլմի աստղը ցնցող մանրամասներ է բացահայտել ամուսնու մասին: Ըստ Էնջիի՝ նա ձեռք է բարձրացրել անգամ երեխաների վրա: Ինքնաթիռով չարաբաստիկ թռիչքի ժամանակ դերասանն իբր վնասել է կնոջ մեջքը՝ նրան աթոռի վրայից գցելով:

Ամուսնալուծության գործընթացն ավարտվել է, սակայն խնամակալության եւ ունեցվածքի բաժանման հետ կապված վարույթը դեռ շարունակվում է: Ընդ որում՝ ո՛չ Փիթը, ո՛չ Ջոլին մտադիր չեն զիջումների գնալ:

Շայլոն վերջերս համարձակ կերպարանափոխություն է արել: Դերասանների դուստրը սափրել է գլուխը:

● *Հունիսի 21-ին Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնում տեղի կունենա «Խաղն ավարտված է» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝4000 դրամ: Սկիզբը՝ժամը 20:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՍՅՈՒՆԷ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս կարող եմ աշխատանքի ընդունվել հանրապետության նախագահի աշխատակազմում:

Ռուստամ Թովմասյան (30 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Հանրապետության նախագահի աշխատակազմի քաղաքացիական ծառայող համարվող աշխատակիցներն աշխատանքի են ընդունվում «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

ՀՀ նախագահի աշխատակազմ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Քաղաքացիական ծառայող չհամարվող մյուս աշխատակիցների հետ աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով եւ «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով» սահմանված կարգով:

ԴԻՄՈՒՄ

ՀԱՐՑ. Սահմանադրական դատարան դիմում կարո՞ղ եմ օնլայն ներկայացնել:

Մինաս Գրիգորյան (35 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր՝ իրավասու անձի կողմից ստորագրված: Դիմումը ներկայացվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով:

ՀՀ Սահմանադրական դատարան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ էլեկտրոնային եղանակով դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Երեւանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի բակում տեղի է ունեցել ԵՊՀ շրջանավարտների արդեն ավանդական դարձած ավարտական տոնական միջոցառումը, որի նպատակն էր հանդիսավորությամբ ճանապարհել ԵՊՀ 2022/2023 ուստարվա շրջանավարտներին եւ ներկայացնել համալսարանի ավելի քան 150 հազար շրջանավարտների միավորմամբ ստեղծվող «ԵՊՀ շրջանավարտների համայնք»-ի գործունեությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

2011 Ժողովուրդ 1
www.armlur.am

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+7 +12 / +20 +24
Կոտայքի լեռներ	+6 +11 / +19 +23
Կոտայքի նախալեռներ	+15 +17 / +26 +29
Գեղարքունիք	+7 +11 / +19 +22
Լոռի	+8 +13 / +17 +20
Տավուշ	+11 +16 / +19 +22
Արագածոտնի լեռներ	+6 +10 / +19 +22
Արագածոտնի նախալեռներ	+12 +17 / +25 +30
Արարատ	+17 +20 / +30 +33
Արմավիր	+14 +16 / +30 +32
Վայոց ձորի լեռներ	+8 +11 / +20 +23
Վայոց ձորի նախալեռներ	+16 +19 / +30 +33
Սյունիքի հովիտներ	+15 +19 / +26 +31
Սյունիքի նախալեռներ	+12 +14 / +20 +22
Արցախ	+15 +19 / +22 +27
Երեւան	+15 +17 / +28 +30

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **19.6.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*